

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՁԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Ք. ա. 68 թ. Արածանիի ճակատամարտում Հայաստանի
հաղթանակի 2080-ամյակի առթիվ*

Քանալի բառեր – Տիգրան Մեծ, Տիգրանա-
կերտ, Կիկերոն, Արածանիի ճակատամարտ, Հռոմ,
Պարթևստան, «vehementia», հունական թատրոն, պա-
րադիս, հելլենիզմ, Պողոս առաքյալ:

Մուտք

Պատմական մեծ անհատի գործունեության ուսումնասիրու-
թյունն ու գնահատումը մեծապես նպաստում են ժողովրդի (էթնոսի)
պատմական գիտակցության ձևավորմանը, ինչը լեզվամշակութա-
յին ու հոգևոր-կրոնական արժեհամակարգերի հետ կազմում է նրա
ազգային ինքնագիտակցությունը:

Գիտական ուսումնասիրությունների հետևանքով ի հայտ եկած
մեծ անհատի՝ պատմական անձի կերպարը կատարում է ժողովրդի
հոգևոր-մշակութային և քաղաքական կոնսոլիդացման գործառույթ:
Սակայն տվյալ գործառույթն իրականացնելու համար պատմական
անհատի՝ հերոսի կերպարը թե՛ տարերայնորեն ձևավորվող պատ-
մական հիշողության, թե՛ գիտական ուսումնասիրությունների հի-
ման վրա բյուրեղացած պատմական գիտակցության մեջ պիտի հա-
մապատասխանի բարոյականության օբյեկտիվ, վերպատմական
չափանիշներին, բարու մասին հասարակական պատկերացումնե-
րին և հասարակական գիտակցության մեջ ձանաչվի արդար: **Պատ-
մական մեծ անհատի գործունեության գիտական գնահատակա-**

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.07.2022:

նը, այսպիսով, յուրաքանչյուր հանրույթի գիտակցության մեջ անբաժանելի է նրա գործունեության բարոյական արժևորումից: Նման մոտեցումը պետք է դրվի Տիգրան Մեծի գործունեության քննության հիմքում: Հետևաբար իրավաչափ է հարցադրումը՝ արդա՞ր էին արդյոք Տիգրան Մեծի գործը և հետապնդած նպատակը: Այս հարցադրումը մեզ անում միշտ չէ, որ արժանացել է գիտականորեն հիմնավորված պատասխանների: Այս առումով հիմք կա՞ ընդունելու, օրինակ, Տիգրան Մեծին 1940–1970–ական թթ. խորհրդահայ պատմագիտության մեջ տրված բնորոշումն իբրև նվաճողի, որը միջազգային ասպարեզում առաջնորդվում էր իշխող դասակարգի տնտեսական շահերով, կամ էլ ճանաչված պատմաբան **Ռիչարդ Հովհաննիսյանի** հետևյալ պնդումը՝ «...ան չի յիշուիր, որովհետև կռուեցաւ սեփական փառքին համար»¹:

Տիգրան Մեծի գործունեության իր գնահատականում խորհրդահայ պատմագիտությունը հենվում էր պատմության մատերիալիստական ուսմունքի վրա, ըստ որի՝ «տնտեսական շահերը վերջին հաշվով հանդես են գալիս որպես քաղաքական գործողությունների սոցիալական պատճառ»²: Հայոց արքայի «նվաճողական» որակվող արտաքին քաղաքական գործողությունները բացատրվում էին տնտեսական շարժառիթներով՝ նոր տարածքների յուրացման, շահագործման ձգտումներով, այսինքն՝ իշխող դասակարգի նյութական պահանջներով, ըստ **Հակոբ Մանանդյանի**՝ «կալվածատիրական ազնվականության»³, իսկ ըստ **Գագիկ Սարգսյանի**՝ «ստրկատերերի»⁴ հարստացման և հետևաբար արտաքին ծավալման կարիքներով: Գ. Սարգսյանի խոսքերով՝ «Հայաստանի աճող ստրկատիրական տնտեսությունը, զարգացող քաղաքային կյանքը պահանջում էին մարդկային ուժի նորանոր զանգվածներ: Իսկ գյուղատնտեսության մեջ հողատեր–ստրկատերերի զարգացող դասակարգը, որը միապետի (Տիգրան Մեծի – Ռ. Մ.) հիմնական հենարաններից մեկն էր ու նրա հատուկ մտահոգության առարկան, նորանոր հողեր էր ստանում, ինչպես և զավթում և իր դաստակերտները

1 Ցիտված է ըստ **Մառթնոսեան Վ.**, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի եւ Պարթևստանի դէմ, Ռ. Մանասէրեան, «Բազմավէպ», Վենետիկ, 1992, ՃԾ. տարի, N 1-4, էջ 349:

2 **Бовин А. Е.**, Политика, «Философский энциклопедический словарь», М., 1983, с. 507.

3 **Մանանդյան Հ. Հ.**, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Եր., 1972, էջ 74:

4 **Սարգսյան Գ. Խ.**, Հայկական աշխարհակալ տերությունը: Տիգրան Բ, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Եր., 1971, էջ 557:

մշակելու համար ավելի ու ավելի լայն չափերով օգտագործում ստրկական աշխատանքը»⁵:

Տվյալ պատկերացումներով Ք. ա. 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմն իր բնույթով երկուստեք նվաճողական էր թե՛ Հռոմի, թե՛ Հայաստանի համար: Պարտություն կրելով՝ Տիգրանը կորցրեց իր նվաճած Սիրիան, Փյունիկիան, Արևելյան Կիլիկիան և կապիտուլացվեց Հռոմի առաջ⁶:

Անհրաժեշտ է նշել, որ Տիգրան Մեծի գործունեության կոնկրետ դրվագներին տրված գնահատականներում 20-րդ դարի խորհրդահայ և սփյուռքահայ պատմագիտությունը հիմնականում ելնում էր 19-րդ դարի եվրոպական՝ գերմանական ու ֆրանսիական պատմագիտության մեջ հայոց արքայի մասին արտահայտված բացասական տեսակետներից: Այդ տեսակետները պայմանավորված էին ոչ միայն հունահռոմեական սկզբնաղբյուրների վկայությունների թերի ուսումնասիրությամբ կամ դրանց լիակատար անտեսումով, այլև կոնկրետ հեղինակների (Թ. Մոմզեն, Թ. Ռեյնակ) որոշակիորեն քաղաքականացված հայեցակետերով, որոնք հիմնված էին եվրոպական տրոնության գաղափարի վրա, որը Հռոմին (արևմտյան քաղաքակրթության զարգացման տվյալ փուլը մարմնավորողին) հակադրված ուժերին բնութագրում էր իբրև հետադեմ կամ ասիական⁷:

Ընդհանուր առմամբ հարկ է արձանագրել, որ 19-20-րդ դդ. հետազոտողները, անդրադառնալով Տիգրան Մեծի անձին և գործունեությանը, անտեսում էին սկզբնաղբյուրների կարևոր վկայությունները և այդպիսով թերագնահատում ու նսեմացնում նրան իբրև

5 Նույն տեղում, էջ 570:

6 Պատմական իրականությունն աղավաղող այդ պատկերացումները ամփոփ ձևով ներկայացրել է Սուրեն Երեմյանը 1970 թ. «Սովետական մեծ հանրագիտարանի» Հայաստանի պատմությանը նվիրված հոդվածում. «Հռոմի դեմ պատերազմում նա պարտություն կրեց, կորցրեց նախկինում նվաճած գրեթե բոլոր հողերը՝ Սիրիան, Փյունիկիան, Արևելյան Կիլիկիան, ստիպված էր կապիտուլյացվել Պոմպեոսի առաջ և ճանաչել Մեծ Հայքի կայսրությունը Հռոմից (Ք. ա. 66 թ.)» («Большая Советская Энциклопедия», т. 2, М., 1970, с. 220): Հետաքրքրական է, սակայն, որ Տիգրան Մեծի գործունեությանը ճշմարիտ գնահատական է տրվել դեռևս 1947 թ. «Սովետական մեծ հանրագիտարանի» ԽՍՀՄ-ին նվիրված հատորում Ն. Ռուբինշտեյնի կողմից. «Հայաստանի տերիտորիան լիովին միավորվեց Ք. ա. I դարի սկզբին Տիգրան II Մեծի (Ք. ա. 95-56) իշխանության ներքո, որը կայուն կապեր հաստատեց Արևելքի պետությունների հետ և կազմակերպեց վերջին վճռական դիմադրությունը Հռոմեական կայսրության գրոհին» («Большая Советская Энциклопедия», М., 1947, кол. 298):

7 Տե՛ս Մոմмзен Т., История Рима, т. II, М., 1941, էջ 251:

քաղաքագետի⁸: Նրանց տեսակետները ներառում էին երկու հիմնական դրույթներ.

ա) Տիգրան Մեծի արտաքին-քաղաքական գործունեությունը՝ «նվաճումները», պատճառաբանվում էին Հայաստանի իշխող դասակարգի (կալվածատերերի, ստրկատերերի) նյութական շահերով, նաև արքայի անձնական փառասիրությամբ:

բ) Միջազգային ասպարեզում Տիգրան Մեծին վերագրվում էին կոպիտ սխալներ, որոնք իբր թույլ էին տրվել արտաքին վտանգները չհասկանալու և անհեռատես քաղաքականության հետևանքով:

Այդ կապակցությամբ, առանց խորանալու Արտաշեսյան Հայաստանի հասարակարգի բարդ հարցերի մեջ, հարկ է լույս համառոտակի մատնանշել դրա հիմնական առանձնահատկությունները: Հայաստանում Տիգրան Մեծի օրոք գոյություն չունեցող, դեռևս չէր ձևավորվել հողի խոշոր սեփականատիրական դասակարգը՝ համայնական գյուղացու կամ էլ հայտնի չէ, թե ինչու և ինչպես նրան փոխարինած ստրուկների զանգվածի շահագործողը: Ավելին՝ Արտաշեսյան Հայաստանում, ինչպես բնորոշ էր հինարևելյան հասարակություններին, Տիգրան Մեծի հետևողական գործունեության շնորհիվ ձևավորվել էր կենտրոնացված պետությունը՝ ռազմավարչական ապարատը և տեղերում՝ գավառներում կառավարող ու արքայի կողմից վերահսկվող 120 ստրատեգիաների՝ ամբողջ երկիրը ընդգրկած ռազմատարածքային միավորների ցանցը: Այդ պետական աստիճանակարգը գործում էր իր մեջ ներգրավված ծառայա-

8 19-20-րդ դդ. եվրոպական պատմագիտության մեջ Տիգրան Մեծի նսեմացված կերպարի արձանատվորմանը, անգամ նրա անձի բացասական բնութագրմանը խիստ նպաստել է Թ. Ռեյնակի Պոնտոսի արքա Միհրդատ Եվպատորին նվիրված աշխատությունը (տես **Reinach Th.**, *Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890*, էջ 347-348): Ֆրանսիացի պատմաբանը թույլ է տվել իրեն փնտելի Տիգրան Մեծին Բ. ա. 72-71 թթ. Հռոմից Միհրդատի կրած պարտությունների ժամանակ չեզոք դիրք պահպանելու համար: Ռեյնակի աշխատության ուղղակի ազդեցությամբ արդեն 1983 թ. **Է. Վիլլը** պարզապես անտեսում էր միջազգային ասպարեզում Տիգրանի կողմից զուտ հայաստանյան շահի պաշտպանության հնարավորությունը (տես **Will E.**, *Histoire politique du monde hellénistique*, t. II, Nancy, 1983 (Paris, 2003), էջ 447): Իսկ Հ. Մանանդյանը Տիգրանի գործունեության վերաբերյալ չէր գործածում անգամ «արտաքին քաղաքականություն» հասկացությունը: Հռոմի էքսպանսիայի վերաբերյալ հայոց արքայի դիրքորոշման մասին նա գրում է. «Տիգրանը չէր սպասում և ամենևին չէր նախագգում իր երկրին սպառնացող մեծ վտանգը» (**Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 110): Մանանդյանի այս տեսակետը կրկնել է Գ. Սարգսյանը (տես **Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 582-584): Թ. Ռեյնակի և Է. Վիլլի ազդեցությամբ են գրված իսպանացի պատմաբան Լ. Բալեստերոս Պաստորի Միհրդատ Եվպատորին նվիրված աշխատության Տիգրան Մեծի գործունեության մասին գլուխները (տես **Balesteros Pastor L.**, *Mitridates Eupator, rey del Ponto, Granada, 1996*, էջ 238-241, 245-246, 422-424):

կան ավագանու՝ տիրակալ արքային անվերապահ հպատակության սկզբունքի հիման վրա:

Ծառայական ավագանին՝ արքայի «ծառաները», նյութապես գոյություն ունեին տիրակալի շնորհումների հաշվին: Պետությունը՝ համայնական գյուղացիության միակ շահագործողը, փաստորեն, Հայաստանի իշխող դասակարգի գոյության ձևն էր⁹: Այդ տիրական «դեսպոտական» համակարգը վճռորոշ խոչընդոտ էր իր մեջ ընդգրկված ծառայական դասի միջավայրում անշարժ գույքի՝ հողի սեփականության, անձի քաղաքացիական իրավունքների իրացման համար: Խոշոր մասնավոր հողային սեփականատիրական դասակարգը Հայաստանում ձևավորվեց մեր թվարկության II-III դդ., երբ արտաքին ուժերի միջամտությունների հետևանքով թուլացավ և կազմալուծվեց կենտրոնացված պետական-տիրական համակարգը: Պետությանը պատկանող աշխատունակ և մարտունակ մարդկային ռեսուրսը (գյուղական համայնքները) անցավ տեղերում ձևավորված ռազմատոհմային ավագանու՝ նախարարության իշխանության տակ:

Տիգրան Մեծի՝ որպես քաղաքագետի գործունեության ու պատմական դերի ճշմարիտ գնահատականը հնարավոր է տալ, եթե հաշվի առնվեն սույն հետազոտական խնդրի լուսաբանման համար անհրաժեշտ հետևյալ նախապայմանները.

ա) ժամանակաշրջանը և արտաքին քաղաքական պայմանները, որոնցում ծավալվում էր Տիգրանի գործունեությունը,

բ) տվյալ իրականությունից օբյեկտիվորեն բխող պետական (հասարակական, ազգային) շահը և այդ շահի կամ ավելի ձիշտ՝ պատմական մարտահրավերի՝ Տիգրանի կողմից գիտակցման, իմաստավորման աստիճանը, ինչն արտահայտվում էր քաղաքական նպատակի ձևակերպմամբ,

գ) օբյեկտիվորեն գոյություն ունեցող պետական (ազգային) շահի իրացման աստիճանը, այսինքն՝ այն վերջնական քաղաքական արդյունքը, որը Տիգրանի՝ որպես քաղաքագետի, գործչի գնահատման վճռորոշ չափանիշն է:

9 Տե՛ս Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Եր., 1987, էջ 100-101, Մանասերյան Ռ., Թագավորական իշխանության հաստատության առանձնահատկությունները Արտաշեսյանների օրոք (թագավոր ու ավագանի), «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1999, N 1, էջ 77-85:

Քաղաքականությունը (թե՛ արտաքին, թե՛ ներքին), ինչպես հայտնի է, տվյալ անհատի, գործչի կոնկրետ և նպատակասուլաց գործողությունների ծավալումն է, բազմաքայլ միջոցառումների միակցությունը, սակայն դա օբյեկտիվորեն տրված շահի սուկ հայելային արտացոլումը չէ: Այն մշտապես այս կամ այն չափով կրում է քաղաքագետի անհատականության կնիքը, մարտահրավերներին դիմագրավելու խնդրում լուծումներ գտնելու նրա կարողության, իրեն դիմակայող իրականությանը սեփական կամքը պարտադրելու արդյունքն է: Նման քաղաքականության հաջող իրականացման նախապայմանը ուժեղ իշխանությունն էր, և այդ իրողության գիտակցումն առկա էր Տիգրան Մեծի առաջին իսկ քայլերում: Հետևաբար Տիգրանի՝ որպես քաղաքագետի ամբողջական դիմանկարը ներկայացնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ **նրա բնավորության գծերը, կամային որակներն ու ինտելեկտուալ մակարդակը և անգամ ֆիզիկական կարողություններն ու առողջական վիճակը:**

1. Տիգրան Մեծի ժամանակը

Ք. ա. II-I դդ. սահմանագլխին Հայաստանի միջազգային դրությունը պայմանավորվել է դեպի նրա սահմանները Հռոմի և պարթևական Իրանի էքսպանսիայի ուժգնացմամբ: Ք. ա. 113-112 թթ. Պարթևստանը ձեռնարկեց Մեծ Հայքի նվաճման վճռական փորձ, որի հետևանքով պարթևներին պատանդ տրվեց գահաժառանգ Տիգրանը: Իսկ Ք. ա. 96-95 թթ. Հռոմն իր անմիջական իշխանությունը հաստատեց Կապադովկիայում՝ Հայաստանի արևմտյան սահմաններին: Այսպիսով՝ Ք. ա. II-I դդ. սահմանագլխին Հայաստանի համար ձևավորվող միջազգային կացությունը հարկ է բնութագրել որպես նվաճողական տերությունների կողմից վտանգավոր շրջափակում, ինչը նշանակում էր մշտապես լինել «աշխարհաքաղաքական արքանում», երկկողմանի սպառնալիքի տակ: Այդ իրողությունը առավել պարզորոշ դարձավ Ք. ա. 92 թ. (Տիգրան Մեծի գահակալման 4-րդ տարում) Եփրատի ափին տեղի ունեցած հռոմեա-պարթևական բանակցություններում, որոնց ընթացքում կողմերը՝ Հռոմն ու պարթևական Իրանը, եկան Եփրատն իրենց ազդեցության և տի-

րապետության ոլորտների սահմանագիծ ճանաչելու մասին համաձայնության: Ք. ա. 92 թ. հռոմեա-պարթևական բանակցությունները բովանդակում էին մի կարևոր կետ ևս, այն է՝ պարթև արքան առաջարկում էր հռոմեական կողմին Տիգրան Մեծի դեմ կնքել ռազմական դաշինք: Այսպիսով՝ առաջ էր եկել մեծ տերությունների Արևելքում տիրապետության հաստատման հեռանկարը՝ Հայաստանի դեմ նրանց դաշնակցության հնարավորությամբ, ինչը նրա համար ստեղծել էր երկու ճակատով պատերազմի վտանգ¹⁰:

Այս կարևորագույն փաստերը՝ Տիգրան Մեծի պայքարը Հռոմի առաջխաղացման դեմ Կապադովկիայում (Ք. ա. 93-91 թթ.), Ք. ա. 92 թ. հռոմեա-պարթևական առաջին դիվանագիտական շփման հակահայկական նպատակները, աչքաթող են արվել եվրոպական և հայկական պատմագիտության կողմից: Ուստիև հաշվի չի առնվել Ք. ա. II-I դդ. սահմանագծին Առաջավոր Ասիայում միջազգային ուժերի դասավորության մեջ կատարված տեղաշարժերի՝ Հայաստանի համար սպառնալից ուղղվածությունը: Մինչդեռ պատմական ճշմարտությունն այն է, որ Հայաստանի համար վերահաս վտանգը՝ երկկողմանի ագրեսիայի գոհ դառնալու սպառնալիքը, չի վրիպել հայոց արքա Տիգրան Մեծի տեսադաշտից: Գահ բարձրանալով Ք. ա. 96 թ.՝ նա իր առջև խնդիր դրեց կասեցնելու Հռոմի և Պարթևստանի առաջխաղացումը դեպի Հայաստան:

2. Գործունեության արտաքին և ներքին քաղաքական նախադրյալները

Ընդամենը երկու տարում՝ Ք. ա. 85-83 թթ., Հայաստանը վերածվեց Առաջավոր Ասիայի մեծագույն տերության: Տիգրան Մեծի այդ ռազմադիվանագիտական հաջողությունը պայմանավորված էր դեպի Հայաստան Արևելյան Միջերկրածովքի հեղինակական հասարակությունների կողմնորոշմամբ: Հայոց արքայի իշխելը 10 միլիոն բնակչություն ունեցող 900.000 կմ² տարածքի վրա և միաժամանակ վճռական ռազմաքաղաքական դիմակայությունը երկու մեծ տերություններին՝ Հռոմին ու պարթևական Իրանին, հատուկ ուշադրության արժանի երևույթներ են: Այս երկակի ռազմաքաղաքական

10 Տե՛ս **Մանասերյան Ռ.**, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, էջ 43-45:

խնդիրն իրականացնում էր մի երկիր, որի դեմոգրաֆիկ և հետևաբար տնտեսական ռեսուրսներն իրականում խիստ սահմանափակ էին: Ք. ա. 68 թ.՝ Արտաշատի վրա հռոմեական վճռական գրոհի նախօրեին, Մեծ Հայքն ուներ ոչ ավել, քան 130-140 հազ. աշխատունակ և մարտունակ արական բնակչություն: Ք. ա. 68 թ. գարնանը Մեծ Հայքում անցկացված մասսայական զորահավաքը տվեց 105 հազ. ռազմական գործին պիտանի տղամարդ (դաշտային աշխատանքներից կտրված գյուղացիություն): Ուստի 900.000 կմ² տարածքը՝ 10 մլն բնակչությամբ, հնազանդության մեջ էր պահվում 50-60 հազ. զինուժ ունեցող պետությամբ, որն իրեն էր ենթարկել և կառավարում էր նաև տեղացի, բայց օտարազգի զինուժին: Ք. ա. 69 թ. մայիսից հոկտեմբերի 11-ը՝ Հռոմի դեմ պատերազմի առաջին փուլում, հայկական կողմը տվեց առնվազն 20 հազ. սպանված, իսկ ավելի ստույգ թիվը ընկած է 20-30 հազարի միջակայքում: Դրանում ինչ-որ տոկոս կազմում էին օտարազգիները (հույները, Հյուսիսային Միջագետքի արամեացիները և այլք): Այսպիսով՝ Ք. ա. 69 թ. հոկտեմբերին եղած 60 հազ. մարտական ուժից կորսվել էր առնվազն մեկ երրորդը: Այդ կորուստներին Հայաստանը հակադրեց պայքարելու վճռականությունը, հոգեբանական տոկոսությունը, ինչը պսակվեց հաղթանակով Արածանիի ձակատամարտում:

Հռոմի հարվածին դիմակայեց գերկենտրոնացված պետությունը՝ խարսխված արքայապաշտ գաղափարախոսության վրա: Արքան երկրի միասնության խորհրդանիշն էր և երաշխավորը: Իսկ ավագանու ռազմածառայական դասակարգի շահը լուծվում էր ընդհանուր պետական շահում: Այդ համակարգում խոշոր հողային սեփականությունը, ինչպես վերը նշվել է, վերացած էր, քանի որ կլանված էր պետական (արքայական) սեփականությամբ:

3. Տիգրան Մեծի անձի բնութագիրը

Ռազմաքաղաքական կազմակերպության կոշտ հիերարխիան (աստիճանակարգը) շարժման մեջ էր դրվում Տիգրանի կամքով՝ անկոտրում ոգով: Հռոմի մեծագույն մտավորական, Տիգրան Մեծի ժամանակակից Մարկոս Տուլիոս Կիկերոնը շեշտում է Տիգրան Մեծի բնավորության այդ կարևորագույն գիծը. «Նա ինքնին կորովալից

էր»: «Կորովալից» բառով մենք թարգմանել ենք հռոմեական «vehemens» բառը, որն ածականն է «vehementia» գուտ հռոմեական հասկացության: «Vehementia» նշանակում է «ֆիզիկական, մտավոր և ոգեղեն ուժի զուգակցում, միահյուսում», նաև «կիրք»: Կիկերոնը նաև նշում է Տիգրանի «ոգին»՝ «animus»-ը. Տիգրանակերտի անկումից հետո «նա պահպանեց թշամական ոգին (animus) մեր հանդեպ և իր նախկին մտադրությունները»¹¹:

Կիկերոնը չի նույնացնում իր այդ նշած ոգին Տիգրանի «mens»-ի՝ նպատակադրման հետ, որը նույնպես հակահռոմեական էր: Այս հոգեբանական հատկանիշների (ոգու և նպատակադրման տարբերակմամբ) կիկերոնյան հաղորդման մեջ շեշտվում էր, որ ոգին՝ «animus»-ը, նախ և առաջ նշանակում է «կամք, հաղթանակելու հաստատականություն, նպատակին՝ «mens»-ին՝ հաղթանակին հասնելու պայման»: Այդ կամքով էր զոդված պետական ռազմավարչական ապարատը: Այդ համակարգը՝ Տիգրան Մեծի ժառանգությունը, հարատևեց մինչև III դարի կեսերը (Սասանյանների կողմից Հայաստանի նվաճումը)՝ ապահովելով Հայաստանի պետական ամբողջականությունը: **Արշակունի թագավորները՝ Արշակն ու Պապը, իրականում պայքարում էին հենց այդ տիգրանյան քաղաքական ժառանգության վերականգնման համար:**

Կենտրոնացված պետության համար բնութագրական էր խստագույն, անգամ դաժանագույն կարգապահությունը: Այն յուրացվում էր ոչ որպես պարտադրանք վերևից, այլ վարքի նորմ, որի արտահայտությունն էին անձնագոհությունը և անմնացորդ ծառայությունը արքային: Այդ սկզբունքը բացառություն չէր ձանաչում: Տիգրանն անձամբ դրա անողոր իրագործման օրինակը տվեց ավագանուն, երբ նրա աչքի առաջ մահապատժի ենթարկեց իր 24-ամյա որդուն՝ Արտաշեսին, ընդունված արարողակարգը՝ արքայի անձի հանդեպ հարգանքը չպահպանելու համար:

Տիգրանյան ժամանակաշրջանի ռազմածառայական ավագանու ներկայացուցչի անձնուրացության օրինակ էին Միհրոբարզանի (Մեհրուժան) գլխավորությամբ 6 հազ. հայ մարտիկների՝ Պլուտարքոսի խոսքերով «քաջաբար կատարված» գրոհը 56-հազարանոց

11 Cic., Pro P. Sestio oratio, 27, 58.

հռոմեական բանակի վրա և անհավասար ձեռնամարտը¹²: Լուկուլ-լոսը դեպի Տիգրանակերտ ճանապարհ հարթեց միայն այդ 6 հազար հայ մարտիկների՝ աննահանջ մարտում ընկնելուց հետո:

Տիգրանի բազմաբովանդակ, նպատակամղված և անխնջ գործունեությունը, միանգամից մի քանի պետական և դիվանագիտական խնդիրներ հետևողականորեն լուծելու կարողությունը պահանջում էին հոգեբանական մեծ ծանրաբեռնվածություն կրելու ունակություն, նաև պատշաճ ֆիզիկական պատրաստվածություն, անձնական տուկունություն: Հակառակորդ կողմը՝ հունահռոմեական աղբյուրները, հավաստում են նրա ֆիզիկական մեծ ուժը: Տիգրանն անձամբ է առաջնորդել իր բանակի գրեթե բոլոր արշավանքները՝ բացառությամբ երկուսի՝ Ք. ա. 92 թ. Կապադովկիա և Ք. ա. 82 թ. Կենտրոնական Միջագետք: Պլուտարքոսն ու Ապպիանոսը նշում են 72-ամյա Տիգրանի գլխավորած զրահավոր հեծելազորի երկու հզոր գրոհը. մեկը՝ Ք. ա. 68 թ. Արածանիի ափին, մյուսը՝ Ք. ա. 68 թ. ուշ աշնանը հռոմեացիներին տված իր երրորդ մեծ ճակատամարտում: Նա հեշտությամբ ձիավարում էր 74 տարեկանում: Երիվարով հասնելով Պոմպեոսի բանակատեղը՝ նա նժույգի վրայից ինքնուրույն ցատկեց գետնին: Ք. ա. 66 թ.՝ 74 տարեկան հասակում, արքան հայր է դարձել, ունեցել դուստր, որին Ք. ա. 53 թ. հունիսին Արտավազդ արքան ամուսնացրեց Պարթևստանի գահաժառանգ Բակուրի հետ:

Սալյուստիոսի (Ք. ա. 85-31 թթ.) կորուսյալ «Պատմություն»-ից պահպանվել է մի փշրանք հաղորդում. «Չնայած որ նա 70 տարեկան էր, զրահավորված ընդոստում էր նժույգի վրա»¹³: Այս տողը Սալյուստիոսի աշխատության 5-րդ գլխից է, որում ներկայացվում են Ք. ա. 67 թ. Հայաստանում և Պոնտոսում կատարված ռազմական գործողությունները: Պատմաբանները սովորաբար հակված են այդ վկայությունը վերագրելու Միհրդատ Պոնտացուն՝ ֆիզիկական մեծ ուժի տեր մի մարդու: Սակայն ենթադրելով, որ Սալյուստիոսը նկատի ուներ Միհրդատին, հարկ կլինի ընդունել, որ այդ բանիմաց հեղինակը՝ իրադարձությունների ժամանակակիցը, սխալվել է Միհրդատի տարիքի հարցում առնվազն 4 տարով: Պոնտական պատմագրությունից քաղած Ապպիանոս Ալեքսանդրացու հաղորդմամբ՝ Միհրդատը,

12 Տե՛ս **Plut.**, *Luc.*, XXV, 4:

13 **Sal.**, *Hist. V.*, Fr. 5.

որ ինքնասպան էր եղել Ք. ա. 63 թ., ապրել է 68 կամ 69 տարի¹⁴: Նրա ծննդյան տարեթիվը Ք. ա. 132 թվականն էր կամ Ք. ա. 131-ը: Այսպիսով՝ Ք. ա. 67 թ., որին վերաբերում է Սայուստիոսի տեղեկությունը, Միհրդատը 64 կամ 65 տարեկան էր: 70 տարի Միհրդատը չի ապրել: Հետևաբար Սայուստիոսի վկայությունը, ամենայն հավանականությամբ, Տիգրանի, այլ ոչ թե Միհրդատի մասին է: Ք. ա. 67 թ. հայոց արքան 70-ն անց էր՝ 73 տարեկան: Սայուստիոսի հաղորդման մեջ, որ համապատասխանում է հեծյալ ձակատամարտերին Տիգրանի մասնակցության մասին հունահռոմեական հաղորդումներին, պահպանվել է 70 տարեկան հայոց արքայի ֆիզիկական հզորությունը և պատրաստվածությունը պատկերող ուշագրավ մի դրվագ: Ասպանդակը տվյալ ժամանակում չէր գործածվում¹⁵, և Տիգրանն առանց կողմնակի օգնության ընդոստում էր նժույգի վրա՝ թամբի վրա հենվելով և ձգվելով իր բազուկներով: «Արքայական», այսպես կոչված՝ նեսեական երիվարի մնդավի (վզակոթի) բարձրությունը 150-155 սմ էր¹⁶: Այդ բարձրությամբ ընդոստումները կատարվում էին մարտից առաջ, երբ արքան զրահավորված էր, այսինքն՝ ընդոստման պահին նա պիտի կրեր 10-15 կգ երկաթե զրահ: Ուստի երիվարով նման վարժանքը հնարավոր էր 175 սմ-ից ոչ պակաս հասակ ունենալու դեպքում:

Մենք բնավ չափազանցություն թույլ տված չենք լինի Տիգրան Մեծի՝ որպես քաղաքագետի գնահատականում, եթե ընդգծենք, որ նա հայոց պատմության մեջ կատարելության հասցրեց քաղաքականության արվեստը՝ որպես պայքարի արվեստ, այն է՝ իշխանության (պետական կամքի) իրացում, հասարակական նպատակի հետևողական հետապնդում՝ թե՛ ռազմական, թե՛ դիվանագիտական բազմազան միջոցների հնուտ զուգակցումով:

Քաղաքականության մեջ լինելու 32 տարվա ընթացքում Տիգրան Մեծը թույլ չի տվել ոչ մի թերհաշվարկ, ոչ մի սխալ: Նա օժտված էր բարդ պայմաններում սառնասրտորեն կողմնորոշվելու, ձշգրիտ և անվրեպ որոշումներն արագ կայացնելու կարողությամբ: Տիգրան Մեծի ողջ կյանքը (անձը և ընտանեկան հարաբերություն-

14 Տե՛ս App., Mithr., 112:

15 Ասպանդակի գյուտն արվել է Չինաստանում մոտ III դարում (տե՛ս «Научный гений Древнего Китая» Курьер «ЮНЕСКО», М., ноябрь, 1988, էջ 18-19):

16 Տե՛ս Ковалевская В. Б., Конь и всадник, М., 1977, էջ 133:

ները) և գործունեությունը ենթակա էին քաղաքական նպատակահարմարության սկզբունքին ու սառը քաղաքական հաշվարկին (նրա ամուսնությունը Կլեոպատրայի՝ Միհրդատ Պոնտացու դստեր հետ նախ և առաջ քաղաքական դաշինքի արտահայտություն էր. Ք. ա. 66 թ. այդ դաշինքը խզելուց հետո Տիգրանն արտաքսեց Կլեոպատրային հոր մոտ՝ Բոսպորոս): Նա կարող էր մի դեպքում լինել անողոք և դաժան, մյուս դեպքում՝ չափավոր և մեղմաբարո: Նրա վճիռները երբեք չեն թելադրվել հույզով, ցասմամբ կամ ատելությամբ: Տիգրան Մեծի բնավորության այդ հատկանիշները նրա քաղաքական վարքագծի հիմքն են կազմել և պայմանավորել նրա գործունեության վերջնական արդյունքը՝ **Հայաստանի փրկությունը Հռոմի և Պարթևստանի նվաճումների սպառնալիքից**: Իսկ արդյունքը, ինչպես հայտնի է, բոլոր ժամանակների քաղաքագետների՝ պետական այրերի գնահատման խնդրում գլխավոր չափանիշն է, նամանավանդ եթե այդ արդյունքն ունի բարոյական բովանդակություն՝ ազգային-պետական շահի իրացում¹⁷:

4. Տիգրան Մեծի կառավարման քաղաքական արդյունքները

Հռոմի և Պարթևստանի առաջխաղացմանը Տիգրան Մեծը հակադրեց իր մեծագույն քաղաքական կոթողը՝ հելլենիզմի դարաշրջանի վերջին մեծ տերությունը: Այդ խնդրում նա գործակցում էր Հռոմի և պարթևների բոլոր թշնամի ուժերի հետ: Ք. ա. 69-66 թթ. պատերազմում Հռոմը և նրա հետ Ք. ա. 66 թ. դաշինք կնքած պարթևական Իրանը նպատակ էին հետապնդում ոչ միայն վերջ դնելու հայոց թագավորի տիրապետությանը Մերձավոր Արևելքում, այլև գրավելու և վերացնելու հայոց թագավորությունը՝ Հայաստանը, և՛ որպես պետություն, և՛ որպես էթնոքաղաքական ամբողջություն: Ք. ա. 68 թ. սեպտեմբերին Արածանիի ափին Տիգրանը պարտության մատնեց Հռոմի լավագույն բանակներից մեկին: Արածանիի ձակատամարտի պատմական նշանակությունն այն էր, որ տապավեցին Արտաշատը գրավելու և Հայաստանը Հռոմի նահանգ դարձնելու

17 Քաղաքականության տեսության հիմնադիր Ն. Մաքիավելին առաջինն էր, ով որակեց հաջողությունը, դրված նպատակի իրագործումը և վերջնական արդյունքը որպես անհատի քաղաքական գործունեության գնահատման չափանիշներ (տես *Горфункель А. Х., Философия эпохи Возрождения, М., 1980, էջ 151-152*):

Լուկուլլոսի ծրագրերը: Կիկերոնի բնութագրմամբ՝ Հայաստանում հռոմեական բանակի համար պատերազմը ոչ թե ոչ հաղթական էր, այլ «ծանր»:

Ք. ա. 66 թ. Հայաստանին սպառնացող երկու ձակատով անհավասար և իր հետևանքներով կործանարար պատերազմը կասեցվեց Տիգրան Մեծի անձնական դիվանագիտական ջանքերով: Մենք կկարողանանք գնահատել Ք. ա. 66 թ. Հայաստանի համար վերահաս վտանգի ողջ մեծությունը, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ ազգային (էթնիկական) դիմագերծմանը, լեզվական ձուլմանն ավելի են ենթակա սեփական լեզվով գրավոր մշակույթ չունեցող ժողովուրդները, տվյալ դեպքում՝ բանահյուսությամբ միավորված հայ համայնական գյուղացիությունը: Հռոմեական նվաճումները միայն կողոպուտով և հպատակեցված ժողովուրդների որոշակի զանգվածի գերեվարմամբ ու ստրկացմամբ չէ, որ ուղեկցվում էին, այլ դրանց հետևանք էին նաև նվաճվածների կանոնակարգված քաղաքակրթական կյանումն ու մշակութային դիմագծի հետևողական համահարթեցումը: Նվաճված երկրներում հաստատվում էին հռոմեական վարչությունը, ուսուցումը լատիներենով իրականացնող դպրոցական համակարգը, հռոմեական իրավունքը, հռոմեա-իտալիկյան գաղութաբնակների համայնքները՝ քաղաքները:

Ք. ա. 66 թ. երկու ձակատով կորստաբեր պատերազմում հայ արական բնակչության անխուսափելի կորուստները պիտի հանգեցնեին արական և իգական բնակչության միջև հարաբերակցության խախտմանը և արական կորսված գենոֆոնդի փոխարինմանը նոր՝ դրսից բերված հռոմեական գենոֆոնդով: Ք. ա. 66 թ. հայերը խուսափեցին գալլերի, իսպանական կելտիբերների, դակիացիների և թրակիացիների ձակատագրից, որոնք, զոհ գնալով հռոմեական նվաճմանը, I-III դդ. լիովին ասիմիլյացվեցին, հռոմեականացան: Հռոմեական կայսրության ընդերքում, բայց արդեն՝ հունական մշակույթի և հունարենի հիման վրա, էթնիկ ձուլման ենթարկվեցին Փոքր Ասիայի լիկիացիները, փյոյուզացիները, բյութանացիները և գալաթները: Հռոմն ամենուրեք իր տիրապետության տակ գտնվող տարածքներում ընդհատում էր տեղական էթնոլեզվական կոնսոլիդացման գործընթացները: Նկատի առնելով հռոմեական նվաճումների այդ

հետևանքները՝ հարկ է իրավամբ ասել, որ **Ք. ա. 66 թ. վճռվեց հայ ժողովրդի՝ որպես ազգային ամբողջության գոյության հարցը:**

Տիգրանը փրկեց պետությունը՝ հայ ժողովրդի կոնսուլիդացման և զարգացման նախապայմանը, ճանաչել տվեց Հռոմին Հայաստանի գոյությունը՝ որպես պետություն իր բնական սահմաններում՝ Եփրատից և Տիգրիսից մինչև Կուր և Կասպից ծով: Այդ սահմաններում հայկական պետությունը պահպանեց իր գոյությունը մինչև 387 թվականը, երբ նրա դեմ իրականացավ հռոմեա-իրանական համատեղ էքսպանսիայի վատթարագույն տարբերակը՝ ներքուստ թուլացած և արտաքին քաղաքական նախաձեռնություն չցուցաբերած Հայաստանի բաժանումը և որպես պետություն վերացումը, այսինքն՝ իրականացավ դեռևս Ք. ա. 92, 68, 66 թթ. Տիգրանի առջև ծառայած սպառնալիքը:

41 տարով՝ 387 թվականից մինչև 428 թվականը, հայկական կենտրոնացված պետության երկարաձգված հոգեվարքի շրջանում Հայաստանում հանդես եկավ արդեն մի նոր քաղաքական և հոգևոր ուժ՝ քրիստոնեական եկեղեցին: Մեսրոպ Մաշտոցը և իր աշակերտները, Սահակ Պարթևը՝ ազգային մտավորականության այդ առաջին մեծ համաստեղությունը, կատարեցին իրենց պատմական առաքելությունը: Ստեղծվեցին գիր, ազգային դպրոց, գրականություն, ժողովրդի ազգային ինքնությունն իմաստավորվեց քրիստոնեական վարդապետության և իր պատմական անցյալի իմացության հիման վրա: Այս հոգևոր, ազգային-քաղաքակրթական հաղթանակի համար անհրաժեշտ էր, որ Տիգրան Մեծը վերացներ Հայաստանի համար մահացու սպառնալիքները, հաղթանակեր նախ ռազմի դաշտում, ապա՝ դիվանագիտական ասպարեզում:

5. Տիգրանակերտի ֆենոմենը որպես Տիգրան Մեծի համամարդկային իդեալների մարմնավորում

Տիգրան Մեծի գործունեությունը բովանդակում է նաև համամարդկային խորհուրդ: Նրա քաղաքական կենսագրության մեջ Տիգրանակերտի պատմությունը իր ներքին բովանդակությամբ ինքնուրույն գլուխ է: Արքայի մտահղացմամբ տերության քաղաքամայր

Տիգրանակերտը ստեղծվել է որպես Արևելքի բազմազգ, վիթխարի կենտրոն՝ մեգալոպոլիս:

Դեռևս Եվրիպիդեսը (Ք. ա. 480-406 թթ.)՝ Հունաստանի մեծագույն թատերագիրը, իր հռչակավոր «Բաքոսուհիներ» ողբերգության մեջ հիշատակում է Ասիայի քաղաքները, որտեղ հելլենները (հույները) միասին էին ապրում «բարբարոսների» հետ¹⁸: Եվրիպիդեսի համար հույների և բարբարոսների համակեցությունը նույն քաղաքում գրական հորինվածք էր, թերևս անհրազործելի իդեալ: Նրա «Բաքոսուհիներ» պիեսին քաջածանոթ էին հայոց արքունիքում: Տիգրան Մեծն անշուշտ պիտի կարդացած լիներ այդ տողերը, պիտի հիշեր դրանք: Քաղաքական անհրաժեշտությունը նրան բերեց նման քաղաքի ստեղծման գաղափարին: Տիգրանակերտին արքան վերապահում էր կարևորագույն՝ միավորիչ դերն Արևելքում: Ակնհայտ է մտահղացման պրակտիկ քաղաքական կողմը, այն է՝ քաղաքը պիտի միավորեր մեծ տերության հպատակ ժողովուրդների ներկայացուցիչներին, նրանց համայնքները¹⁹, այսինքն՝ արտացոլեր տերության գոյության սկզբունքը՝ ժողովուրդների գոյակցությունը, համակեցությունը, տարբեր մշակույթների և դավանանքների տեր էթնոսների միասնությունն ու փոխհամաձայնությունը, ինչն իր հերթին բուն քաղաքի գոյության նախապայմանն էր: Այդ գործողության մեջ ընթեռնելի է արքայի ելակետային միտքը. Հայաստանը՝ իբրև առաջավորասիական հելլենիստական տերության միջուկ, իր անվտանգությունն ու անկախությունը պիտի ապահովեր Արևելքի տեղաբնիկ և հույն ժողովուրդների համակեցությամբ:

Ալեքսանդր Մակեդոնացու ժառանգները՝ Արևելքի հելլենիստական միապետները, հրաժարվել էին հույների և արևելցիների մերձեցման քաղաքականությունից: Իրենց հիմնադրած քաղաքներում նրանք չէին վարում տարբեր էթնոսների համաբնակեցմանը, միավորմանը միտված քաղաքականություն²⁰: Նրանք չէին մերժում իրենց քաղաքներում օտարազգիների՝ արևելցիների ներգաղթը, բայց հետևողականորեն խրախուսում էին նրանց տարերային հելլենականացումը:

18 Տե՛ս Eurip., Bacchae, 19:

19 Տե՛ս Plut., Luc. XXVI, 1, Strabo, XII, 2, 9, Strabo, XI, 14, 15:

20 Տե՛ս Гафуров Б. Г., Цибукидис Д. И., Александр Македонский и Восток, М., 1980, էջ 364, Шахермайр Ф., Александр Македонский, М., 1986, էջ 353-355:

Հռոմը ևս չէր վարում հպատակեցված ժողովուրդների մերձեցման քաղաքականություն, այլ հետամուտ էր նրանց իրավական, լեզվամշակութային հռոմեականացմանը:

Տիգրանակերտում Արևելքի և հույների մշակութային մերձեցման սկզբունքը իրազննաբար մարմնավորվեց հելլենիզմի պատմության մեջ աննախադեպ իրադարձությամբ: Տիգրան Մեծի վճռով այստեղ կերտվեցին արևելյան (հայկական) և հելլենական քաղաքակրթությունների համար տիպիկ երկու շինություն, դրանք խորհրդանշող երկու կոթող՝ վիթխարի Պարադեյտոսը (պարադիս, պարտեզ) և հունական թատրոնը²¹: Թատրոնը կառուցվեց քաղաքի պարիսպների ներսում, պարադիսը՝ պարտեզը՝ քաղաքից դուրս՝ թագավորական պալատի կողքին: Այդ կոթողները երկու քաղաքակրթություններում՝ հելլենականում և արևելյան-ավանդականում, մարդու՝ անհատի տեղի և դերակատարության մասին, ըստ էության, հակադիր պատկերացումների մարմնավորումներ էին:

Հույն մարդը կատարում էր իրեն արտաքննապես խորթ ուժի՝ ամենակալ ձակատագրի, այլ կերպ ասած՝ օբյեկտիվ անհրաժեշտության կամքը, բայց հենց ինքն էլ հակադրվում էր իրեն բաժին հասած ձակատագրին²²՝ հաստատելով իր ինքնությունը, իր անձնական ազատությունը:

Արևելցին ներառնված էր ամբողջության մեջ (աշխարհ, սոցիալ-քաղաքական կազմակերպություն): Նա ներդաշնակ ամբողջի (կառույցի) մասն էր, բաղադրատարր, որի երկրային մանրակերտն է գերագույն Աստծո պատգամով ստեղծված արքայական պարադիսը²³: **Ընդհանուր սոցիալական և մշակութային տարածքում խորհրդանշական այդ կոթողների համատեղությամբ փաստորեն զուգակցվեցին Արևմուտքի և Արևելքի երկու հիմնարար գաղափարները՝ անհատի ազատությունը և կանոնակարգված աշխարհի ներդաշնակությունը (հարմոնիա):** Այդ գաղափարները՝ մարդկային կեցության հիմնարար սկզբունքները, որոնք կարելի է հանգեցնել «ես»-ի և «մենք»-ի, մասնավորի և հանրայինի հակա-

21 Տե՛ս **Manasserian R.**, L'Arménie et le Proche-Orient au temps de Tigrane le Grand, "L'Arménie entre Orient et Occident", Paris, BNF, 1996, էջ 37:

22 Տե՛ս **Тахо-Годи А. А.**, Судьба как эстетическая категория (об одной идее А. Ф. Лосева), «Античная культура и современная наука», М., 1985, էջ 326:

23 Տե՛ս **Вейнберг И. П.**, Человек в культуре древнего Ближнего Востока, М., 1986, էջ 61, 132-133, **Лелеков Л.**, Парадиз, «Мифы народов мира», т. 2, М., 1982, էջ 285:

դրությամբ, իրականում, ինչպես բխում է թատրոնի և պարադիսի հարևանությունից, իրար հետ մերվող են և միմյանց լրացնող: **Դրանց երկուսի ցուցադրական մարմնավորումը Տիգրանակերտում կարող էր հանգեցնել Արևմուտքի և Արևելքի քաղաքակրթական սինթեզի, անձնական ազատության և անձը համահարթեցնող կարգի՝ ամբողջի միակցմանը և դրա հետևանքով ներդաշնակ աշխարհակարգի ձևավորմանը: Ազատ մարդը պիտի մուտք գործեր պարտեզ՝ պարադիս, դրանով իսկ կազմավորեր նոր հասարակական ամբողջություն:**

Թատրոնում և պարադիսում ամփոփված գաղափարաբանական արժեքների զուգակցումը արտացոլում էր նաև Տիգրան Մեծի քաղաքական կառավարման պրակտիկան՝ Սիրիայի քաղաքային դեմոկրատիաների (համայնքների) հովանավորում ու ընդարձակում և միաժամանակ Հայաստանում գերկենտրոնացված պետական կարգի ստեղծում: Երկու դեպքում էլ արքան հմտորեն օգտագործում էր այս երկրների համար բնորոշ քաղաքական մշակույթի ավանդները: Այստեղ դրսևորվում են Տիգրանի անձի համակողմանիությունը, նրա քաղաքական լայնախոհությունը, նորը յուրացնելու և կիրառելու ձիրքը:

Ակնհայտ է, սակայն, որ թատրոնն ու պարադիսը մասսայական ըմբռնման համար խիստ վերացական սիմվոլներ էին: Բազմազգ բնակչության պրակտիկ, առօրեական համակեցությունը, բնականոն կենցաղային շփումները և սոցիալ-տնտեսական փոխգործողություններն ընթանում էին (չէին կարող չընթանալ) փոխվանող կարծրատիպերի շրջանակներում: Սակայն այդ իրողության մեջ օբյեկտիվորեն ներփակ էր հակադիր պատմական զարգացման հնարավորությունը ևս. միջէթնիկական շփումների մշտական բնույթը, որ ստեղծվեց Տիգրան Մեծի ջանքերով, տևաբար պահպանվելու դեպքում կարող էր նպաստել հույների և արևելցիների («բարբարոսների») մեջ իրենց ընդհանրության գիտակցմանը, համամարդկային բարոյականության՝ հոգևոր արժեհամակարգի ձևավորմանը: Հենց համանման բազմաէթնիկ և բազմամշակութային միջավայրում Տիգրանակերտի հիմնումից 130 տարի անց Պողոս առաքյալը հռչակեց մարդկության ոգեղեն նորոգումը. «...չկա հելլեն, հուդայացի բարբարոս, սկյութ, ստրուկ, ազատ, այլ ամենը և ամեն ինչում՝

Քրիստոս»²⁴: Այդ ճշմարտությունն առ այսօր՝ իր հռչակվելուց 2000 տարի անց, մնում է մարդկության համար հեռավոր իդեալ: Ուստի ավելի օրինաչափ էր, որ տարբեր էթնիկական համայնքների համագոյակցումն ապահովվելու փորձը Տիգրանակերտում ընթացավ փոխադարձ օտարացման, հելլեն-«բարբարոս» հակադրության խորացման ուղիով: Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 10-11-ը Տիգրանակերտում հույները ապստամբեցին «բարբարոսների» դեմ և բացեցին քաղաքի դարպասները հռոմեական բանակի առաջ:

Նկատի առնելով Տիգրանակերտում կատարված էքսպերիմենտի խորհուրդը՝ չափազանցություն չէր լինի, եթե ասեինք, որ նրա անկումը մարդկության պարտությունն էր միջքաղաքակրթական համակեցություն ստեղծելու փորձում: Տիգրան Մեծը պաշտպանեց հայ ժողովրդի կենսական շահերը՝ անվտանգությունն ու գոյությունը: Լուծելով ազգային գոյության խնդիրը՝ նա անհրաժեշտաբար քայլ կատարեց դեպի համամարդկային նշանակություն ունեցող և անգամ 21-րդ դարում մարդկության կողմից չհաղթահարված հավիտենական պրոբլեմների լուծումը՝ իմաստավորված լուծումը, այն է՝ ժողովուրդների և քաղաքակրթությունների միջև օտարացման հաղթահարումը և մերձեցման ու համակեցության հաստատումը, որի հիմքում անխուսափելիորեն պետք է ձևավորվեր համընդհանուր-մարդկային բարոյական-ոգեղեն արժեհամակարգը: Այդ ճանապարհին հայոց արքա Տիգրան Մեծը պատմական նախորդներ չունեք, և, ըստ էության, նա առաջամարտիկն էր²⁵:


6. Հերոսական դարաշրջանի շունչը

Տիգրան Մեծի հերոսական դարաշրջանից պահպանվել են արվեստի նմուշներ՝ մեդալիոններ, մարտիկների և հեծյալների կավե արձանիկներ²⁶: Դրանք փոխանցում են դարաշրջանի **շունչն ու ոգին**, փառաբանում ի պաշտպանություն հայրենիքի պայքարը, մարտական սխրանքը և հաղթանակը:

24 «... ούκ έν. Έλλην και Ίουδαίος (...), βάρβαρος, Σκύθής, δούλος, ελεύθερος, αλλά πάντα και έν πάσιν Χριστός.» (ΕΠΙΣΤ, ΠΡΟΣ ΚΟΛΑΣΣΑΕΙΣ (3, 11), Oxford, Novum Testamentum Graece, 1953).

25 Այս հարցում անգամ Ալեքսանդր Մակեդոնացու մտահղացումները դուրս չեն եկել աղոտ խարխափումների շրջանակներից:

26 Առաջին անգամ հրապարակել է ժ. Խաչատրյանը (տես **Խաչատրյան ժ.**, Հայաստանի անտիկ շրջանի կրոնապատմական, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1977, N 5, էջ 51-54):



Նկ. 1. Տիգրան Մեծի դարաշրջանի հեծյալների կավե արձանիկներ

Արձանիկները մեզ են ներկայացնում Տիգրան Մեծի առաջնորդությամբ ռազմի և փառքի ուղին անցած հայ մարտիկին՝ Արտաշեսյանների օրոք տղամարդու նորմատիվ պատկերը, այլ կերպ ասած՝ առնականության իդեալը (դրա կատարյալ մարմնացումը թագավորն էր):

Հեծյալները նստած են ծառս եղած երիվարների վրա ուղիղ ու վստահ և պիտի անկանգ շարունակեն իրենց սլացքը: Հեծյալներից երրորդի գրահապատ ուսերին գցված է երկար և ծածանվող թիկնոց (նկ. 1): Գուցե այդ հեծյալը հենց ինքն է՝ Տիգրան Մեծը:

Հետևակային զինվորի (նկ. 2) կազմվածքը ճշտորեն համապատասխանում է Մովսես Խորենացու աշխատության մեջ վիպերգական Տիգրան Մեծի արտաքինի նկարագրին՝ «վայելչակազմ և թիկնա-

վետ»²⁷: Հայ մարտիկն իր հաղթ բազուկները կանթել է իր ձիգ և մարզված իրանին: Ուսերն ընդգծված լայն են ու հզոր: Նա ամուր է



Նկ. 2. Տիգրան Մեծի հայ զինվորը

կանգնած, գլուխը վճռականորեն թեքած դեպի կողմ՝ դեպի սպասվող վտանգը: Նրա ընդհանուր կեցվածքն արտահայտում է իր բնավորությունը՝ հպարտ, վստահ, անվախ, Կիկերոնի նշած «տիգրանյան ոգին»: Մեր առջև մարտահրավեր նետող և մարտահրավերին դիմագրավելուն պատրաստական հայն է՝ **հերոսականության մարմնացումը:**

Տիգրան Մեծի դարաշրջանի արվեստի մեկ այլ նմուշ պատկերում է **Նիկեին**՝ հաղթանակի դիցուհուն (նկ. 3): Նա ձախ ձեռքում պահում է արմավենու ձյուղը՝ խաղաղության նշանը, իսկ աջով՝ բարձրացնում ռազմաավարը՝ սպանված հռոմեացի

հարյուրապետից հանված լանջապանակն ու սաղավարտը: Հայկական Նիկեն հելլենիզմի ժամանակաշրջանի արվեստի հազվագյուտ նմուշներից է, որոնք փառաբանում էին հռոմեացու նկատմամբ հաղթանակը: Այդ պատկերի խորհուրդը հստակ է. **խաղաղությունն ու անդորրը հնարավոր են միայն թշնամուն հաղթելուց հետո:**



Նկ. 3. Հայկական Նիկե

Միսիանի դամբարանում գտնված մեդալիոնի վրա արծիվը սպանում է հովազին (նկ. 4): Գտնվել են այդպիսի մի քանի մեդալիոններ: Պատկերը սովորական որսորդական տեսարան չէ, այլ գաղափարաբանական հռչակագիր՝

27 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, գիրք 1, գլուխ ԻԴ:

արտահայտված դիցաբանական կերպարների միջոցով²⁸: Արծիվը հայ առասպելաբանության մեջ աստվածային լույսի մարմնացումն է և Արտաշեսյան արքայի կերպարը: Մեղալիոնի արծիվը՝ **Տիգրան Մեծի թագի արծիվը, խրոխտ ու հաղթական հայացքը հառել է դեպի վեր՝ դեպի արեգակը**: Նրա ոտխը՝ նրա հզոր ձանկերում շունչը փչող հովազը, մարմնավորում է քառսն ու խավարը: Հովազը սանձարձակության և գինարբուքի աստծուն՝ Դիոնիսոսին պատկանող և նրան խորհրդանշող կենդանին է: Եվրիպիդեսի պիեսում Դիոնիսոսը տիրապետում է մարդու մեջ ներփակ ոչ բանական (իռացիոնալ) ինքնակործան տարերքին, արձակում ագրեսիվ նկրտումները: Տեսարանն ամփոփում է Տիգրան Մեծի դարաշրջանի պետական գաղափարաբանության ակնհայտ խրոխտությունը: Ըստ էության, այն արքայի քաղաքական պատգամն է՝ հազարամյակների խորքից եկած ուղերձը՝ **չարի դեմ անհաշտ պայքարը և բարու (լույսի**



Նկ. 4. Տիգրան Մեծի պետական խորհրդանիշը

թռչունի) վճռական հաղթանակը: Իր ժողովրդին Տիգրան Մեծը պատգամել է հայի իր իդեալը՝ հասցված մեզ իր մարտիկների կերպարանքներով, որոնք անխոնջ մղում են կենաց ու մահու պայքարը, հաղթանակի անկոտրում կամքով աննահանջ ընթանում դեպի իրենց վեհ ու հայրենանվեր նպատակը:

Ռուբեն Լ. Մանասերյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Արտաշեսյան և Արշակունյաց Հայաստանների և հարևան երկրների՝ Հռոմի ու Պարթևստանի պատմության հիմնահարցերը, միջագային հարաբերությունները, արտաքին քաղաքականությունը, դիվանագիտությունը և պետական գաղափարաբանությունը:

Էլ. հասցե՝ Rub.Man.Academy@gmail.com

28 Տե՛ս **Manasseryan R. L.**, The Eagle killing the Leopard (Towards an interpretation of the scene on the medallion from Armenia), "Aramazd", Armenian Journal of Near Eastern Studies, 2009, v. IV, issue 1, էջ 93-96: Պատկերում ճշգրտորեն վերարտադրվում է Հին Մակեդոնիայի մայրաքաղաք Պելլայի խճանկարի հովազը, որի մեջքին նստած է Դիոնիսոսը:

Summary

ABOUT ASSESSING THE PERSONALITY AND ACTIVITIES OF TIGRANES THE GREAT

On the occasion of the 2080th anniversary of the victory of Armenia in the battle of Aratsani in 68 B.C.

Ruben L. Manasseryan
Doctor of Sciences in History

Key words – Tigranes the Great, Tigranakert, Cicero, the battle of Aratsani, Rome, the Parthian Empire, the Greek theatre, paradise, Hellenism, Paul the Apostle.

The idea of Tigranes II the Great, widespread in historical works of general nature, as a conqueror, guided by the material interests of the ruling class - "landlords", according to Y.A. Manandyan, and "slave owners" - private and land owners, according to G. Kh. Sargsyan, is not confirmed by data on the social system of Ancient Armenia and the facts regarding the foreign policy activities of the Armenian king. Large-scale private land ownership was not formed in Armenia; more precisely, it was decisively replaced by state property (ownership). The state, represented by the tsar, acted not only as the supreme owner of the land, but also as the direct exploiter of the communal peasantry in the localities. Armenia of the era of Tigranes the Great typologically belongs to the societies of the East, in which the state (the central apparatus and the provincial administration) is the form of existence of the ruling class (military nobility).

The foreign policy of Tigranes was initially aimed at repelling the threat emanating from the expansion of the great powers: Rome from the West, and Parthia from the East. Already in 92 B.C., during the Roman-Parthian negotiations, an agreement was reached on the future division of the Middle East between the two powers along the Euphrates River. They also considered concluding a military alliance against Armenia.

Tigranes assumed of uniting the political forces in the Middle East, interested in preventing the establishment of the dominance of Rome and Parthia. As a result, he united the Middle East into a great Hellenistic power. Rome, represented by a contemporary of Tigranes, great political thinker M. T. Cicero, highly appreciated the personality and activities of the Armenian king. Cicero

emphasizes the originality of Tigranes' personality, "hic ipse per se vehemens fuit" - "and he was powerful in himself."

"Vehemens" is a definition meaning a combination of mighty energy and physical strength. In addition to these properties of Tigranes, Cicero notes the steadfastness, unbrokenness of his fighting spirit (animus), his determination to achieve victory after the defeat during the first stage of the war - the loss of the capital, Tigranakert, the collapse of the state and the transition of the countries of the Eastern Mediterranean under the rule of Rome.

On the banks of the Aratsani River, Tigranes inflicted a heavy defeat on the Roman army of Lucullus. Comparing the tactical actions of the parties, the level of their losses, the subsequent course of action, it should be recognized that the Battle of Aratsani was a defeat of the Romans - a very difficult and bloody one, and a victory for the Armenians. Tigranes thwarted Lucullus' plans to capture the capital of Armenia and conquer the country, turning it into a Roman province. This is the historical significance of the battle on the banks of the Aratsani in mid-September of 68 B.C.

Tigranes, as a political figure, is characterised by his ability of combining military and diplomatic means to achieve the goal. During 32 years in active politics, the struggle on two fronts against Rome and Parthia, he made neither a single serious miscalculation, nor a single mistake. His foreign policy is an example of expanding opportunities, expanding the socio-political base - the basis of his dominance, which was the self-governing Hellenistic policy in the Middle East. Accession in Syria in 83 was his biggest diplomatic success, which resulted in the formation of the largest Hellenistic power in the Middle East, and Rome for 15 years lost hope of conquering the Eastern Mediterranean. The most important diplomatic achievement of Tigranes was the prevention of a war on two fronts in 66, against the superior forces of Rome and Parthia, which concluded a military alliance against Armenia. The agreement with Pompey in 66 meant, first of all, the abolition of the Roman-Parthian alliance. Rome recognized the existence of the Armenian state within the borders from the Euphrates to the Kura and the Caspian Sea. The peace treaty was not a military capitulation of Tigranes - the Armenian troops were not subject to any reduction, disbandment, or captivity. These actions revealed such traits of Tigranes' personality as the ability to calmly and quickly navigate difficult situations and make clear, unexpected decisions. It was thanks to these qualities of Tigranes as a politician that determined the final result of his struggle - the salvation of Armenia from the threat of Roman and Parthian conquest. And the result, as you know, is the main criterion in evaluating a statesman.

The activity of Tigranes represents an exceptional milestone in the history of the Hellenistic world. The existence of the state was based on the political interaction of the Armenian and Greek-Syrian societies. The principle of unity and coexistence of peoples representing the Eastern and Greek civilizations was the basis for the existence of Tigranakert, which was possible because the alienation between the peoples, between the Hellenes and the "barbarians", as well as the alienation between the eastern communities of the city, was overcome. Two monuments were erected close to each other - both symbols of the two civilizations of the West and the East. A Greek theater was erected in the city, and a large Paradise was founded outside the city. Their coexistence reveals the world-historical role of Tigranakert as a center of unity and interaction between the cultures of the Hellenes and the East, the Western and the Eastern civilizations. The Greek theater and the Eastern Paradise embody opposite ideas about the place of man in the world and about his destiny. In the combination of these two symbolic structures, two fundamental ideas of the West and the East were compared: the freedom of the individual (citizen) and the world harmonious whole, including a person as its constituent element.

Objectively, thanks to the efforts of Tigranes a socio-psychological inter-ethnic situation was formed, which was supposed to contribute to the formation of the consciousness of belonging to a new supra-ethnic spiritual community among various peoples, their unity based on the priority of universal ethical ideas. However, the coexistence of the ethnic communities in Tigranakert went not along the path of unity and harmony, but along the path of mutual alienation and deepening hostility between them - between the Hellenes and the "barbarians".

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ЛИЧНОСТИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ТИГРАНА ВЕЛИКОГО

К 2080-летию победы Армении в битве у реки Арацани в 68 г. до н. э.

Рубен Л. Манасерян
Доктор ист. наук

Ключевые слова – Тигран Великий, Тигранакерт, Цицерон, битва при Арацани, Рим, Парфия, «vehementia», греческий театр, эллинизм, апостол Павел.

Распространённое в исторических трудах обобщающего характера представление о Тигране II Великом, как о завоевателе, который руководствовался материальными интересами господствующего класса – «помещиков», согласно Я.А. Манандяну, «рабовладельцев» – частных земельных собственников, согласно Г.Х. Саркисяну, не подтверждается данными по общественному строю древней Армении и фактами относительно внешнеполитической деятельности армянского царя. Крупная частная земельная собственность в Армении не сложилась, точнее была решительно заменена государственной собственностью (владением). Государство в лице царя выступало не только верховным собственником земли, но и непосредственным эксплуататором общинного крестьянства на местах. Армения эпохи Тиграна Великого типологически относится к обществам Востока, в которых государство (центральный аппарат и провинциальная администрация) является формой существования господствующего класса (военно-служилой знати).

Внешняя политика Тиграна изначально была нацелена на отражение угрозы, исходившей от экспансии великих держав: с запада - Рима, а с востока – Парфии. Уже в 92 году в ходе римско-парфянских переговоров была достигнута договоренность о будущем разделе Ближнего Востока между обеими державами по реке Евфрат. Был также рассмотрен вопрос о заключении между ними военного союза против Армении.

Тигран поставил себе задачей объединить политические силы на Ближнем Востоке, заинтересованные в предотвращении установления

господства Рима и Парфии. В результате Ближний Восток был им объединён в великую эллинистическую державу. Рим, в лице современника Тиграна, крупнейшего политического мыслителя М. Т. Цицерона высоко оценивал личность и деятельность армянского царя. Цицерон подчёркивает незаурядность личности Тиграна, «*hic ipse per se vehemens fuit*» – «и сам по себе он был могуч».

«*Vehemens*» – определение, означающее сочетание могучей энергии и физической силы. В дополнение к этим свойствам Тиграна Цицерон отмечает стойкость, несломленность его боевого духа (*animus*), его решимость добиться победы после поражения на первом этапе войны – потери столицы Тигранакерта, распада державы и перехода стран Восточного Средиземноморья под господство Рима.

На берегу реки Арацани Тигран нанёс тяжёлое поражение римской армии Лукулла. Сопоставляя тактические действия сторон, уровень их потерь, последующий образ действий следует признать, что Арацанийская битва была тяжёлым поражением римлян и победой армян. Тигран сорвал планы Лукулла по захвату столицы Армении и завоеванию страны, обращению её в римскую провинцию. В этом состоит историческое значение сражения на берегу Арацани в середине сентября 68 года до нашей эры.

Тиграна как политика характеризует искусство сочетания военных и дипломатических средств в достижении цели. За 32 года активной политики, борьбы на два фронта против Рима и Парфии он не допустил ни одного серьёзного просчёта, ни единой ошибки. Его внешняя политика – пример расширения возможностей, расширения социально-политической базы – основы своего господства, каким и явился на Ближнем Востоке самоуправляемый эллинистический полис. Воцарение в Сирии в 83 году было его выдающимся дипломатическим успехом, в результате которого образовалась эллинистическая держава на Ближнем Востоке, а Рим на 15 лет лишился надежд на завоевание Восточного Средиземноморья. Крупнейшим дипломатическим достижением Тиграна было предотвращение войны на два фронта в 66 г., против превосходящих сил Рима и Парфии, заключивших против Армении военный союз. Договор с Помпеем в 66 г. означал прежде всего упразднение римско-парфянского союза. Рим признал существование армянского государства в границах от Евфрата до

Куры и Каспийского моря. Мирный договор не был военной капитуляцией Тиграна - армянские войска не подлежали ни сокращению, ни роспуску, ни пленению. В этих действиях проявились такие черты личности Тиграна, как способность хладнокровно и быстро ориентироваться в сложных ситуациях и принимать верные, неожиданные решения. Именно эти его качества как политика обусловили конечный результат его борьбы – спасение Армении от угрозы римского и парфянского завоевания, а результат, как известно, – главный критерий в оценке политика.

Деятельность Тиграна представляет собой исключительную веху в истории эллинистического мира. Существование державы зижделось на политическом взаимодействии армянского и греко-сирийского обществ. Принцип единения и общежития народов, представлявших восточную и греческую цивилизации, был положен в основе существования Тигранакерта, что было возможным при условии преодоления отчуждения между народами, между эллинами и «варварами», а также отчуждения между восточными общинами города. В Тигранакерте поблизости друг от друга были сооружены два монумента – символы цивилизаций Запада и Востока. В городе был возведён греческий театр, а за городом основан большой Парадиз. Их сосуществование раскрывает всемирно-историческую роль Тигранакерта, как центра единения и взаимодействия культур Эллады и Востока, Западной и Восточной цивилизаций. Греческий театр и восточный Парадиз воплощают противоположные представления о месте человека в мире и о его предназначении. В сочетании этих двух символических сооружений оказались сопоставлены две фундаментальные идеи Запада и Востока: свобода индивида (гражданина) и мировое гармоничное целое, включающее человека в качестве своего составного элемента.

Объективно, усилиями Тиграна была создана общественно-психологическая ситуация, которая должна была способствовать формированию у различных народов сознания принадлежности к новой надэтнической духовной общности, своего единства на основе приоритетности общечеловеческих этических представлений. Однако сосуществование этнических общин в Тигранакерте пошло не по пути единения и согласия, а по пути взаимного отчуждения и углубления враждебности между ними

REFERENCES

1. "Bol'shaja Sovetskaja Enciklopedija", M., "Sovetskaja enciklopedija", 1947 **(In Russian)**.
2. "Bol'shaja Sovetskaja Enciklopedija", t. 2, M., "Sovetskaja enciklopedija", 1970 **(In Russian)**.
3. "Nauchnyj genij Drevnego Kitaja- Kur'er "JUNESKO"", M., nojabr', 1988 **(In Russian)**.
4. **Bovin A. Je.**, Politika, "Filosofskij enciklopedičeskij slovar'", M., "Sovetskaja enciklopedija", 1983 **(In Russian)**.
5. **Gafurov B. G., Cibukidis D. I.**, Aleksandr Makedonskij I Vostok, M., "Nauka", 1980 **(In Russian)**.
6. **Gorfunkel' A. X.**, Filosofija epoxi Vozrozhdenija, M., "Vysshaja shkola", 1980 **(In Russian)**.
7. **Khach'atryan Zh.**, Hayastani antik shrjani koroplastikan, "Lraber" has. git., Yer., 1977, N 5, ėj 37-60 **(In Armenian)**.
8. **Kovalevskaja V. B.**, Kon' I vsadnik, M., "Nauka", 1977 **(In Russian)**.
9. **Lelekov L.**, Paradiz, "Mify narodov mira", t. 2, M., "Sovetskaja enciklopedija", 1982 **(In Russian)**.
10. **Manandyan H. H.**, Tigran Yerkrordĕ yev Hromĕ, Yer., Yerevani petakan hamalsarani hrat., 1972 **(In Armenian)**.
11. **Manaseryan R.**, T'agavorakan ishkhanut'yan hastatut'yan arandznahatkut'yunnerĕ Artashesyanneri črok', "Lraber" has. git., Yer., 1999, N 1, ėj 77-85 **(In Armenian)**.
12. **Manaseryan R.**, Tigran Mets. Hayastani payk'arĕ Hromi yev Part'evstani dem, Yer., "Hayastan", 1987 **(In Armenian)**.
13. **Matt'ĕosean V.**, Tigran Mets. Hayastani payk'arĕ Hromi yew Part'ewstani dĕm, R. Manasĕrean, "Bazmavĕp", Venetik, 1992, CHTS. tari, N 1-4, ėj 349-352 **(In Armenian)**.
14. **Mommzen T.**, Istorija Rima, t. 2, M., 1941 **(In Russian)**.
15. **Movsĕs Khorenats'i**, Hayots' patmut'iwn, Yer., 1991 **(In Armenian)**.
16. **Sargsyan G. Kh.**, Haykakan ashkharhakal terut'yunĕ: Tigran B, "Hay zhoghovrdi patmut'yun", hat. 1, Yer., 1971 **(In Armenian)**.
17. **Shaxermajr F.**, Aleksandr Makedonskij, M., "Nauka", 1986 **(In Russian)**.
18. **Taxo-Godi A. A.**, Sud'ba kak esteticheskaja kategorija (ob odnoj ideje A. F. Loseva), "Antichnaja kul'tura I sovremennaja nauka", M., "Nauka", 1985 **(In Russian)**.
19. **Vejnberg I. P.**, Chelovek v kul'ture Drevnego Blizhnego Vostoka, M., "Nauka", 1976 **(In Russian)**.